ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1965 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՃԱՆԱՉՎԱԾ ՓԻԼԻՍՈՓԱ-ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Վ. Զալոյանի ծննդյան 60-ամյակի առիթով)

Լրացավ Հայկական ՍՍՌ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի ավագ գիտաշխատող Վազգեն Կարապետի Զալոյանի ծննդյան 60 և գիտական գործունեության 35-ամյակը։

Զալոյանը Սովետական Հայաստանի փիլիսոփայական-գաղափարական ճակատի ավագ սերնդի ճանաչված ու հարգված դեմքերից մեկն է։ Նա ծնվել է 1905 թ. Լենինականում, բանվորի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, իսկ հետագայում Երևանի Արովյանի անվան դպրոցում։ Ընդունվելով Երևանի պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը, նա 1926 թ. հաջողությամբ ավարտում է այն։

Զալոյանը մի շարք տարիներ, մինչև 1930 թ., զբաղվել է մանկավարժական գործունեությամբ։ Այդ տարիներին, ուսուցչի պաշտոնով, նա աշխատել է Երևանի Արովյանի, Մյասնիկյանի անվան դպրոցներում և տեխնիկական մի շարք հաստատություններում։

Մուտքը փիլիսոփայության բնագավառը մեր հոբելյարը կատարել է 1931 թ., կարդալով դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի կուրսը, սկզբում բժշկական ինստիտուտում, իսկ հետագայում, մինչև 1934 թ., Երևանի պետական համալսարանում։ Դասախոսական աշխատանքներին զուգահեռ 1930—1934 թթ. նա միաժամանակ վարել է Երևանի միացյալ՝ կերպարվեստի պատմության և գրականության թանգարանի դիրեկտորի պաշտոնը։ 1934 թ. Վ. Զալոյանը ընդունվում է Մոսկվայի պատմա-փիլիսոփայական ինստիտուտին կից ասպիրանտուրան փիլիսոփայության պատմության գծով, իսկ 1938 թ. աշխատանքի է անցնում ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտում։ Սկսելով իր գործունեությունը կրտսեր գիտաշխատողից, նա Հայաստանում առաջինը հասել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի կոչման։

Ակադեմիայում գիտական ասպարեզ մտնելու առաջին իսկ օրից, Վազգեն Զալոյանը կողմնորոշվում է դեպի Հայ ժողովրդի փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրությունը, որին նա նվիրել է իր կյանքի 25 տարիները։

Բազմաթիվ են Վ. Զալոյանի գրչին պատկանող հեղինակությունները։ Նրա անդրանիկ աշխատությունը նվիրված է 5-րդ դարի հայ անվանի մտածող Եղնիկ Կողբացու փիլիսոփայական հայացքներին։ Այս աշխատության մեջ նա առաջին անգամ, մարքս-լենինյան փիլիսոփայության դիրքերից, ձգտել է արժևորել Եղնիկի ժառանգությունը և հանձին նրա վեր է հանել հին Հայաստանի փիլիսոփայական մտքի զարգացման ականավոր գործչի հայացքների փիլիսոփայական սիստեմը։

Մյուս նրա ուսումնասիրությունը նվիրված է հայ փիլիսոփայական մտքի կարկառուն ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ուսմունքի քննադատական վերլուծությանը, որը գիտական մեծ արժեք ունեցող հետազոտություն է։ Սույն ուսումնասիրության արժեքն այն է, որ

Նրա հեղինակը մի նոր աստիճանի բարձրացրեց Դավիթ Անհաղթի մասին եղած մեր պատկերացումները. Դավիթ Անհաղթին ներկայացրեց իր ողջ խորությամբ ու հասակով։

Երկար տարիներ շարունակելով իր ուսումնասիրությունները հայ փիլիսոփայական մտքի հուշարձանների. նրա առանձին ներկայացուցիչների ուսումնասիրության ասպարեզում, Զալոյանը բազմաթիվ հոդվածներ է հրապարակում ինչպես մեր ռեսպուբլիկական, այնպես էլ միութենական ամսագրերում։ Նա գրում է Ստեփանոս Լեհացու, Որոտնեցու, Շիրակացու և շատ ուրիշների փիլիսոփայական, բնագիտական հայացքների, արևելքի ժողովուրդների համաշխարհային փիլիսոփայական մտքի զարգացման մեջ ունեցած դերի, հայ փիլիսոփայության պատմության հանգուցային և այլ հարցերի մասին։

Իր բազմամյա հետազոտությունները, ի վերջո, նա ամփոփում է «Հայ փիլիսոփայության պատմություն» մեծածավալ աշխատության մեջ։ Այս ծանրակշիռ ուսումնասիրության մեջ Վազգեն Զալոյանը, օգտագործելով բազմաթիվ ձեռագիր ու տպագիր նյութեր, տվել է հայ փիլիսոփայական մտքի սիստեմատիկ գիտական շարադրանք՝ սկսած նրա ձևավորման շրջանից առ 18-րդ դարը։ Այդ աշխատությամբ գիտնականը խոշոր ավանդ է մուծել հայ փիլիսոփայական մտքի պատմությունն ամբողջացնելու ու գնահատելու գործում։

Վազգեն Զալոյանը առանձին ուսումնասիրություն է նվիրել նաև հայկական ռենեսանսին. վերագնահատելով 10—13-րդ դդ. հայ ժողովրդի մշակույթի շատ արժեքներ, նա ցույց է տվել, որ հայերը դեռևս եվրոպական ժողովուրդներից առաջ ապրել են մտավոր հեղաշրջման մի կարևոր էտապ՝ վերածնունդ։ Ակադեմիկոս Կոնրադը նշել է, որ Զալոյանի այդ աշխատությունը, ըստ էության, առաջին խոշոր մենագրությունն է ոչ եվրոպական ժողովուրդների Ռենեսանսի՝ վերածնության վերաբերյալ։

Մեծ է նաև Զալոյանի ծառայությունը հայ փիլիսոփայական միտքը Սովետական Միության և այլ ժողովուրդների սեփականությունը դարձնելու ուղղությամբ։ Այս խնդրում նա իրեն դրսևորել է որպես իսկական հայրենասերի։ Բազմաթիվ են այն աշխատությունները, որոնց մասին մեր հրելյարը բնութագրումներ է տվել Սովետական Միության մեծ հանրագիտարանում, փիլիսոփայական հանրագիտարանում և ՍՍՌՄ ժողովուրդների փիլիսոփայական մտքի պատմության նվիրված հրատարակություններում։ Քիչ չեն Վազգեն Կարպիչի այն հոդվածները, որոնք հրատարակվել են Սովետական Միությունից դուրս՝ արտասահմանյան մամուլում և ամսագրերում։

Վազգեն Զալոյանը մեծ ծառայություններ ունի նաև հայ փիլիսոփայական մտքի հուշարձանները հրատարակելու գործում։ Նրա այդ շնորհալի գործունեությամբ հայ անցյալի մտածողների ձեռագիր աշխատությունները մատչելի են դառնում ոչ միայն հայ ժողովրդի, այլև ռուս և օտարերկրյա բնակչող լայն մասսաներին։

Վազգեն Զալոյանը անդրկովկասյան և միութենական բազմաթիվ փիլիսոփայական դիսկուսիաների ակտիվ մասնակիցներից է։

Չի կարելի չնշել գիտնականի մեծ վաստակը փիլիսոփայական որակյալ կադրեր պատրաստելու գործում։ Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորի, ինչպես նաև բուհերում և գիտա-հետազոտական հաստատություններում աշխատող կադրերի մի զգալի մասը նրա նախկին սաներն են։ Ներկայումս էլ նա հաջողությամբ օգնում է երիտասարդ և ավագ գիտական կադրերին, նպաստում դիսերտացիաների պաշտպանության կազմակերպմանը։

Վազգեն Զալոյանը այժմ ղեկավարում է Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորի հայ փիլիսոփայության պատմության խումբը։ Սկզբունքայնություն, օբյեկտիվություն, մարդասիրություն—ահա նրա գործելակերպի հիմնական հատկանիշները։ Չնայած իր 60-ամյա տարիքին նա դեռևս լի է ստեղծագործական ավյունով։

Վերջերս անխոնջ գիտնականի աշխատանքը մի նոր, բարձր գնահատության ևս արժանացավ. Վ. Զալոյանն ընտրվեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։

Ա. ԹԵՎՈՍՅԱՆ